ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 35-Լ

«21» 04 2023 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 44 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 28-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Եղիազար Վլադիմիրի Ավագյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնին նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2023 թվականի ապրիլի 17-ի N 166-Ա հրամանը, ելնելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի և նրա տեղակալների միջև աշխատանքի հավասարաչափ բաժանում և ծանրաբեռնվածություն ապահովելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, նրա տեղակալների և գլխավոր դատախազության ավագ դատախազի և դատախազների միջև աշխատանքի բաժանում կատարելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 10-ի N 28 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2019 թվականի սեպտեմբերի 25-ի N 44 հրամանի

1-ին կետի 4.1-ին ենթակետում «Անահիտ Մանասյանը» բառերը փոխարինել «Եղիազար Ավագյանը» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2023 թվականի ապրիլի 11-ի՝ «Պարտականությունների կատարումը Գևորգ Բաղդասարյանի վրա դնելու մասին» N 28-Լ հրամանը:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ